

## Տ. ԶԱՐԵՀ ԱԲԵՂԱ ԿԱԲԱՂՅԱՆ

Ծնվել է 1972 թ. փետրվարի 17-ին Էջմիածին քաղաքում, ավազանի անունը՝ Եսայի:

1979–1989 թթ. սովորել և ավարտել է տեղի հմր. 9 միջնակարգ դպրոցը:

1989 թ. ընդունվել և 1995 թ. ավարտել է Հոգևոր Ճեմարանը: Պաշտպանել է ավարտաճառ՝ «Հնագետ Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի կյանքն ու գործունեությունը» վերնագրով և արժանացել «լավ» գնահատականի:

1995 թ. հոկտեմբերի 22-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1996 թ. հունվարի 1-ից առ այսօր աշխատում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնում, որպես Էջմիածին քաղաքի և մերձակա շրջանների 6 կիրակնօրյա դպրոցների ընդհանուր տնօրեն:

1996 թ. հունիսի 2-ին Մայր Աթոռում, ձեռամբ Տ. Շահե արքեպս. Աճեմյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: